ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի №1126-Ա/2 հրամանի՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-30-ը և/կամ հունիսի 1-24-ը: Դեկտեմբեր ամսին սովորողը հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Աշակերտն ինքն է ընտրում, թե որ քննություն(ներ)ը հանձնի դեկտեմբերին, որ(ոնք)ը՝ հունիսին:

2016 թվականի դեկտեմբերին անցկացված պետական ավարտական քննություններին մասնակցելու համար ուսումնական հաստատությունների տնօրենները դեկտեմբերի 1-ից մինչև 10-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցել էին ԳԹԿ:

Քննական առարկաների թեստերը կազմվել են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածվող դասագրքերից, ձեռնարկներից և շտեմարաններից:

Քննությունների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև գրավոր աշխատանքների ստուգումը իրականացրել են ուսումնական հաստատությունները:

2016-2017 ուսումնական տարվա դեկտեմբերի գրավոր պետական ավարտական քննություններն անցկացվել են ստորև ներկայացված ժամանակացույցով.

Քննական առարկան	Քննության օրը	Քննության տևողությունը
Հայոց լեզու և հայ գրականություն	26.12.16 թ.	120 րոպե
Մաթեմատիկա	28.12.16 թ.	120 րոպե
Հայոց պատմություն	29.12.16 թ.	120 րոպե

Շրջանավարտների մասնակցությունը պետական ավարտական քննություններին

2016-2017 ուսումնական տարվա դեկտեմբերին անցկացված պետական ավարտական քննություններին 19598 շրջանավարտներից հայտագրվել են 11121-ը, որը կազմում է 12-րդ դասարանի աշակերտների 57 տոկոսը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է երեք առարկաների քննություններին շրջանավարտների մասնակցության աղյուսակը:

Քննական առարկա	Հայտագրված շրջանավարտների թիվը	Մասնակցած շրջանավարտների		Չմասնակցած շրջանավարտների		Անբավարար գնահատական ստացած շրջանավարտների	
		թիվը	Տոկոսը	թիվը	Տոկոսը	թիվը	Տոկոսը
Հայոց լեզու և հայ գրականություն	3843	3754	97.7	89	2.3	21	0.56
Հայոց պատմություն	8534	8429	98.8	105	1.2	28	0.33
Մաթեմատիկա	5887	5790	98.4	97	1.6	8	0.14

Սանդղակավորումը

Թեստերի առաջադրանքների կատարունը գնահատվել է առավելագույնը 50 միավորով: Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի թվով առաջադրանքների ճիշտ կատարմանը:

Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում
49-50	20	**19-20-21**	10
46-47-48	19	**16-17-18**	9
43-44-45	18	**14-15**	8
40-41-42	17	**12-13**	7
37-38-39	16	**10-11**	6
34-35-36	15	**8-9**	5
31-32-33	14	**6-7**	4
28-29-30	13	**4-5**	3
25-26-27	12	**2-3**	2
22-23-24	11	**0-1**	1

Պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները

Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):







Բաշխման հիստոգրամներում տեսնում ենք, որ բոլոր առարկաներից 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է: Ակնհայտ է, որ անբավարար միավորներն արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից: Մեծ է նաև 18 միավոր ստացածների թիվը, հատկապես «Հայոց լեզու և հայ գրականություն» ու «Հայոց պատմություն» առարկաներից, ինչը նույնպես կարելի է բացատրել դպրոցների կողմից գերազանցության շեմի արհեստական բարձրացմամբ:

Վիճակագրական տվյալներ 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	3756	13.51	0.062	3.78
Հայոց պատմություն	8431	14.12	0.037	3.381
Մաթեմատիկա	5792	13.59	0.046	3.482

12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 12-րդ դասարանի պետական ավարտական քննություններից շրջանավարտերի արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերով: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:



Դիագրամում տեսնում ենք, որ շրջանավարտների 0.1-0.6 %-ը չի հաղթահարել դրական միավորների շեմը: Առաջադիմության խմբերում ցածր (8-13) միավորներ հավաքած շրջանավարտները կազմում են 40.4-48.4 %-ը, միջին (14-17) միավորներ հավաքած շրջանավարտները՝ 31.3-39.2 %-ը: Առաջադիմության բարձր (18-20) միավորներ ստացել են մասնակիցների 16.1-20 %-ը:

2016-2017 ուսումնական տարվա դեկտեմբերին անցկացված 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ մարզերի

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բոլոր առարկաներից պետական ավարտական քննությունների միջին միավորներն (ստանդարտ շեղումը) ըստ մարզերի: Մգեցված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:

Մարզը	Հայոց լեզու և հայ գրականություն			Հայոց պատմություն			Մաթեմատիկա		
	Մասնակիցների տոկոսը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների տոկոսը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների տոկոսը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Արագածոտն	6%	12.96	3.61	6%	13.08	3.07	7%	12.76	3.09
Արարատ	3%	**14.19**	3.79	7%	13.59	3.41	5%	**13.65**	3.49
Արմավիր	6%	**14.67**	3.95	6%	**15.19**	3.46	6%	**14.85**	3.50
Գեղարքունիք	5%	13.46	3.60	7%	13.80	3.30	8%	13.26	3.61
Երևան	42%	13.22	3.89	37%	14.05	3.45	36%	**13.75**	3.67
Լոռի	7%	**13.56**	3.86	8%	13.82	3.21	8%	13.30	3.00
Կոտայք	8%	**13.67**	3.59	8%	**14.40**	3.41	8%	**13.64**	3.40
Շիրակ	7%	**13.91**	3.48	6%	**14.71**	3.18	7%	**13.77**	3.17
Սյունիք	6%	13.12	3.10	7%	13.84	3.09	7%	12.89	3.23
Վայոց ձոր	6%	**13.63**	3.76	4%	**15.09**	3.34	4%	**13.74**	3.50
Տավուշ	4%	**14.24**	3.88	5%	**14.72**	3.32	5%	**13.66**	3.44

Աղյուսակում տեսնում ենք, որ Արմավիրի, Շիրակի, Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում բոլոր առարկաներից միջին միավորները բարձր են ընդհանուր միջին միավորներից: Հետաքրքիր է, որ Երևանում միայն «Մաթեմատիկա» առարկայի միջին միավորն է բարձր ընդհանուր միջին միավորից: